



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՐՃ ՏԵՂԵԿԱՆՔ

2023թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ ԴՐՈՒԹՅԱՄԲ






- 2023թ. նոյեմբեր ամսին համաշխարհային տնտեսությունում շարունակվել է ծառայությունների ոլորտի ակտիվության աճը, իսկ մշակող արդյունաբերության ոլորտի անկման տեսլանում են:
- Նոյեմբեր ամսին՝ ի համեմատ հոկտեմբերի, նավթի և մոլիբդենի գները նվազել են, իսկ պղնձի գինն աճել է:
- 2023թ. նոյեմբեր ամսին արձանագրվել է արտահանման և ներմուծման աճի տեմպերի արագացում:
- Նոյեմբերին նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ ՀՀ դրամը դոլարի նկատմամբ արժեզրկվել է 1.8%-ով: Եվրոյի նկատմամբ դրամի արժեզրկման տեմպը, սկսած հուլիսից, արագացել էր. նոյեմբերին արժեզրկման չափը կազմել է 7.3%: Մինչդեռ, ռուսական ռուբլու նկատմամբ դրամը արժևորվել է 45.7%-ով (արժևորման տեմպը նախորդ ամսվա համեմատ թուլացել է):
- Նոյեմբեր ամսին ՀՀ այցելած զբոսաշրջիկների քանակը շարունակում է աճել (3.8%-ով):
- Տնտեսական ակտիվության աճի տեմպը նոյեմբերին կազմել է 11.2%՝ հոկտեմբերի համեմատ արագանալով 5.2 տոկոսային կետով՝ հիմնականում պայմանավորված արդյունաբերության (հատկապես՝ ոսկերչական արտադրատեսակների արտադրության գործունեության աննախադեպ բարձր՝ 13.7 անգամ աճով) և առևտրի աճի տեմպերի արագացմամբ:
- Նոյեմբեր ամսին արձանագրվել է գնանկում: 12 ամսյա գնաճը կազմել է -0.5%: Հոկտեմբերի 31-ին ԿԲ-ն նվազեցրել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը 0.25 տոկոսային կետով՝ սահմանելով 9.25%:
- Ֆինանսական միջնորդությունը շարունակել է առաջանցիկ լինել տնտեսական զարգացումների համեմատ, ընդ որում՝ վարկերի ծավալների աճի տեմպը գերազանցել է ավանդների ծավալների աճի տեմպին, միաժամանակ դառնալով առավել ընդգրկուն ըստ ոլորտների:
- Հարկային եկամուտների աճի տեմպը շարունակում է բարձր լինել (14.1%), թեպետ նկատելի են եղել դանդաղման որոշակի միտումներ:
- Պետական բյուջեի ծախսերը հունվար-նոյեմբեր ամիսներին աճել են 12.8%-ով, որում ընթացիկ և կապիտալ ծախսերն աճել են հիմնականում համադրելի տեմպերով:
- Պետական բյուջեի ծախսերի աճը առաջանցիկ է եղել եկամուտների նկատմամբ և հանգեցրել պետական բյուջեի՝ 62.7 մլրդ դրամի պակասորդի հունվար-նոյեմբեր ամիսների համար, որը, սակայն, առավել ցածր է, քան նախորդ տարվա համադրելի ժամանակահատվածի ցուցանիշը:

**1. Միջազգային զարգացումներ:** Նոյեմբերին համաշխարհային տնտեսական ակտիվության աճի փոփոխություն չի գրանցվել. **Global PMI Composite Output Index-ը նոյեմբեր ամսին կազմել է 50.4՝ պահպանելով հոկտեմբերին գրանցած մակարդակը:** Ծառայությունների ոլորտի ակտիվությունն աճում է, իսկ մշակող արդյունաբերության ոլորտի անկման տեսլանում են: Գործարար լավատեսությունը գտնվում է վերջին 11 ամիսների նվազագույն մակարդակում: Եվրագոտու չորս խոշոր տնտեսություններում գրանցվել է տնտեսական ակտիվության անկում: Մասնավորապես, Գերմանիայում, Իտալիայում և Ֆրանսիայում շարունակվում է անկումը, իսկ Իսպանիայում օգոստոսից ի վեր առաջին անգամ նվազել է մասնավոր հատվածի ակտիվությունը: ԱՄՆ-ում դեռևս շարունակվում է թույլ պահանջարկով պայմանավորված մշակող արդյունաբերության անկումը, իսկ ծառայությունների ոլորտում գրանցվել է թույլ աճ: Մինչդեռ, Չինաստանում գրանցվել է մասնավոր հատվածի ակտիվության աճ՝ պայմանավորված ծառայությունների ոլորտի աճով և մշակող արդյունաբերության աշխուժացմամբ: ՌԴ-ում շարունակվում է աճ գրանցվել, սակայն նոյեմբեր


ամսին մշակող արդյունաբերության և ծառայությունների ոլորտները գրանցել են նախորդ ամսվա համեմատ ավելի թույլ աճի տեմպեր:

Գծապատկեր 1.1. Composite PMI-ի միջուկները.



Գործընկեր երկրների կենտրոնական բանկերի կողմից շարունակվում է իրականացվել զսպող քաղաքականություն: ԱՄՆ Դաշնային պահուստային համակարգը և Եվրոպական կենտրոնական բանկը գնաճի շարունակական նվազմանը զուգահեռ դեռևս պահպանում են քաղաքականության տոկոսադրույքի բարձր մակարդակը: ՌԴ կենտրոնական բանկի կողմից հիմնական տոկոսադրույքը հոկտեմբերին սահմանվել է 15%՝ պայմանավորված առկա գնաճային ճնշումներով, ներքին պահանջարկի աճով և վարկավորման բարձր աճի տեմպերով: Եվրոպական կենտրոնական բանկը և ԱՄՆ դաշնային պահուստային համակարգը շարունակում են իրականացնել զսպող դրամավարկային քաղաքականություն. ԱՄՆ դաշնային պահուստային համակարգը սեպտեմբեր ամսին քաղաքականության տոկոսադրույքը սահմանել էր՝ 5.5% և նոյեմբերին պահպանել միևնույն մակարդակում, իսկ Եվրոպական կենտրոնական բանկը սահմանել է վերանֆինանսավորման տոկոսադրույքը 22 տարիների ամենաբարձր մակարդակում՝ 4.5%:



Գծապատկեր 1.2. Գնաճն ու դրամավարկային քաղաքականության արձագանքը գործընկեր երկրներում



Նավթի միջազգային գինը նոյեմբեր ամսին նախորդ ամսվա նկատմամբ նվազել է 8.7%-ով, իսկ պղնձի գինն աճել է 3.2%-ով: Համաշխարհային տնտեսական ակտիվության դանդաղումը շարունակում է ճնշում գործադրել ապրանքային շուկայում: Արդյունքում, նոյեմբեր ամսին նավթի միջազգային գինը կազմել է 83.2 ԱՄՆ դոլար մեկ բարելի դիմաց՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 8.7%-ով: Պղնձի գինը կազմել է 8189.6 ԱՄՆ դոլար մեկ տոննայի դիմաց՝ նախորդ տարվա նոյեմբերի համեմատ աճելով 1.7%-ով: Պղնձի միջազգային գնի աճին նպաստել է նաև նոյեմբերին Չինաստանի կողմից պղնձի ներմուծման 10.1%-ով աճը՝ հասնելով վերջին երկու տարիների ամենաբարձր մակարդակին: Մոլիբդենի միջազգային գինը օգոստոս ամսվա կտրուկ աճից հետո աստիճանաբար նվազում է. նոյեմբերին նախորդ ամսվա նկատմամբ նվազել է 0.5%-ով, իսկ նախորդ տարվա նոյեմբերի համեմատ աճել է 18%-ով: Պարենի գինը նախորդ տարվա համեմատ նվազել է 10.7%-ով և նախորդ ամսվա համեմատ փոփոխություն չի գրանցվել:




Գծապատկեր 1.3. Նավթի, մետաղների և պարենի գների զարգացումներ



**2. Արտաքին հատվածի զարգացումներ: 2023թ. վերջին**


ամիսներին արձանագրվել է արտահանման և ներմուծման աճի տեմպերի զգալի դանդաղում, իսկ նույնաբերին այն կրկին արագացել է՝ հասնելով 86%-ի (նախորդ ամսվա աճը՝ 15%)՝ կազմելով 1146.7 մլն դոլար, որին ամենամեծ նպաստումն է ունեցել դեպի ՌԴ արտահանումը: Ներմուծումն աճել է 25%-ով (նախորդ ամսվա աճը՝ 24.7%)՝ կազմելով 1244.9 մլն դոլար:

Գծապատկեր 2.1. Արտահանման և ներմուծման միջուկները, մլն դոլար



2023թ. նույնաբեր ամսին շարունակվում է արձանագրվել ՀՀ այցելած զբոսաշրջիկների աճի տեմպի դանդաղում՝ կազմելով 3.8% (նախորդ ամսվա աճը՝ 25.7%): Աճին ամենամեծ նպաստումն են ունեցել ՌԴ զբոսաշրջիկները: Հունվար-նոյեմբեր ամիսներին ՀՀ այցելած զբոսաշրջիկների աճը կազմել է 42%:


Գծապատկեր 2.2. ՌԴ-ից դեպի ՀՀ զբոսաշրջիկների հոսքերը



2023թ. հունվար-հոկտեմբերին ոչ առևտրային բնույթի զուտ դրամական փոխանցումները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ շարունակել են նվազել (42%-ով)՝ հասնելով 759.9 մլն դոլարի, որը պայմանավորված է հիմնականում ՌԴ-ից


փոխանցումների շուրջ 48.3 տոկոս (512.3մլն դոլար) նվազմամբ (նպաստումը՝ 36.5 տոկոսային կետ):

Գծապատկեր 2.3. Ֆիզիկական անձանց փոխանցումների զուտ ներհոսքը



ՀՀ դրամը նույնաբեր ամսին ռուբլու նկատմամբ շարունակել է արժևորվել, իսկ դոլարի և եվրոյի նկատմամբ պահպանվել է արժեզրկման միտումը: Այսպես, նույնաբերին ԱՄՆ դոլարի նկատմամբ դրամը շուրջ 1.8%-ով արժեզրկվել է համեմատած նախորդ տարվա նույն ամսվա հետ: Մարտ ամսից նկատվում էր դրամի արժևորման տեմպի դանդաղում (բացառությամբ սեպտեմբեր ամսի) և այս միտումը դեռևս պահպանվում է: Եվրոյի նկատմամբ դրամը ևս արժեզրկվել է 7.3%-ով: Ռուսական ռուբլու նկատմամբ դրամը արժևորվել է 45.7%-ով (նախորդ ամիս՝ 56.9%):

Գծապատկեր 2.4. ՀՀ դրամի անվանական փոխարժեքի դինամիկան հիմնական արժույթների նկատմամբ




**3. ՀՀ տնտեսական զարգացումներ: Տնտեսական**

ակտիվության աճի տեմպի հոկտեմբեր ամսից նկատվող արագացումը շարունակվել է նաև նույնաբերին՝ հոկտեմբեր ամսվա նկատմամբ արագանալով 5.2 տոկոսային կետով (պայմանավորված հիմնականում արդյունաբերության և առևտրի աճի տեմպերի արագացմամբ) և կազմել 11.2%: Նույնաբեր ամսին արդյունաբերության աճի տեմպի արագացման պատճառ է հանդիսացել ոսկերչական արտադրատեսակների արտադրության գործունեության 13.7 անգամ աճը: Արդյունքում հունվար-նոյեմբերին գրանցվել է SUSA-ի 9.4% աճ՝ հունվար-հոկտեմբերի նկատմամբ արագանալով 0.2 տոկոսային կետով:


SUSA-ի աճը հունվար-հոկտեմբերին պայմանավորված է եղել հիմնականում ծառայությունների (ի հաշիվ տեղեկատվություն և կապի, տրանսպորտի, ինչպես նաև կացության և հանրային սննդի կազմակերպման) աճով: Մյուս ճյուղերը (բացառությամբ՝ արդյունաբերության) նույնպես նպաստել են աճին: Ընդ որում՝ արդյունաբերության նվազումը պայմանավորված է եղել հիմնականում հիմնային մետաղների և սննդամթերքի արտադրության նվազմամբ, իսկ ոսկերչական, ծխախոտային արտադրատեսակների արտադրության և պոլիգրաֆիական գործունեության աճերը էականորեն հակազդել են արդյունաբերության նվազմանը: Շինարարության աճը՝ ըստ ֆինանսավորման աղբյուրների՝ պայմանավորված է եղել հիմնականում կազմակերպությունների և համայնքների միջոցներով իրականացված շինարարության աճով, ըստ տնտեսական գործունեության տեսակների՝ անշարժ գույքի հետ կապված գործունեության ոլորտում շինարարության աճով, իսկ առևտրի աճը՝ հիմնականում մեծածախ առևտրի աճով:



Գծապատկեր 3.2. SU3 և տնտեսության ճյուղերի աճերը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (կուրսակային, %)



Գծապատկեր 3.3. SU3 և տնտեսության ճյուղերի աճերը նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (դիսկրետ, %)




Տնտեսական բարձր ակտիվության պայմաններում հունվար-հոկտեմբերին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 16.1%-ով՝ կազմելով 263,021 դրամ (ընդ որում՝ պետական հատվածում աճել է 10.4%-ով՝ կազմելով 198,613 դրամ, իսկ ոչ պետականում՝ 17.1%-ով՝ կազմելով 289,296 դրամ): Աշխատավարձի աճին հունվար-սեպտեմբերին հիմնականում նպաստել են առևտրի, մշակող արդյունաբերության, մշակույթ, զվարճություններ և հանգստի, ՏՏ, ինչպես նաև կազմակերպչական և հանրային սննդի կազմակերպում ոլորտների աշխատավարձերի աճը: Իրական աշխատավարձը՝ 2.5% գնաճի պայմաններում հունվար-հոկտեմբերին աճել է 13.3%-ով:

Հունվար-հոկտեմբերին պաշտոնապես գրանցված գործազուրկների միջին ամսական թիվը նվազել է 15.1%-ով, իսկ վարձու աշխատողների թիվն աճել է շուրջ 5.6%-ով՝ կազմելով 718,393 մարդ՝ պայմանավորված հիմնականում մշակող արդյունաբերության, կազմակերպչական և հանրային սննդի կազմակերպման, մշակույթ, զվարճություններ և հանգստի, շինարարության, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտներում աշխատողների թվի աճով:

Երկրորդ եռամսյակում գործազրկության մակարդակը կազմել է 11.7%՝ նախորդ տարվա երկրորդ եռամսյակի նկատմամբ նվազելով 1.3 տոկոսային կետով: Գործազուրկների թիվը նվազել է 5.5%-ով, զբաղվածների թիվն՝ աճել 6.0%-ով: Միաժամանակ, աշխատուժի առաջարկն աճել է 4.5%-ով:

Գծապատկեր 3.4. Միջին ամսական աշխատավարձ, վարձու աշխատողներ, (կուրսակային)




«Անշարժ գույքի շուկայում հոկտեմբեր ամսին գները շարունակել են աճել՝ դրսևորելով որոշակի արագացում: Երևան քաղաքում բազմաբնակարան շենքերի բնակարանների շուկայական միջին գների աճը սեպտեմբերի համեմատ ըստ վարչական շրջանների տատանվել է 1.5-ից 3.4% շրջանակներում, իսկ նախորդ տարվա հոկտեմբեր ամսվա նկատմամբ՝ 9.3-ից 16.4% շրջանակներում՝ ամենաբարձր գինը գրանցելով Կենտրոն վարչական շրջանում (1մ<sup>2</sup> մակերեսի հաշվարկով՝ 885,100 դրամ), իսկ ամենացածր գինը՝ Նուբարաշեն վարչական շրջանում (1մ<sup>2</sup> մակերեսի հաշվարկով՝ 223,100 դրամ): Մարզերում բնակարանների շուկայական միջին գների աճը սեպտեմբերի համեմատ տատանվել է 0-ից 4.8% շրջանակներում, իսկ նախորդ տարվա հոկտեմբեր ամսվա նկատմամբ՝ 1.7-36.8%՝ ամենաբարձր գինը գրանցելով Կոտայքի մարզի Ծաղկաձոր քաղաքում (1մ<sup>2</sup> մակերեսի հաշվարկով՝ 425,500 դրամ), իսկ ամենացածր

գինը՝ Լոռու մարզի Թումանյան քաղաքում (1մ<sup>2</sup> մակերեսի հաշվարկով՝ 26,000 դրամ):


4. Դրամավարկային քաղաքականություն: Նոյեմբեր

ամսին արձանագրվել է գնանկում: 12 ամսյա գնաճը կազմել է -0.5% (միջին գնաճը հունվար-նոյեմբերին՝ 2.2%), մինչդեռ բնականոն գնաճը կազմել է -0.2%: Դեկտեմբերի 12-ին ԿԲ-ը ևս մեկ քայլով է նվազեցրել վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ սահմանելով այն 9.25%:

Գծապատկեր 4.1. Գնաճը և վերաֆինանսավորման տոկոսադրույքը



Գծապատկեր 4.2. 12 ամսյա գնաճին նպաստումները, %-ային կետ



12 ամսյա գնաճի մակարդակի ձևավորումը շարունակում է պայմանավորվել հիմնականում սննդամթերքի բացասական, և ծառայությունների գնաճի՝ դրական նպաստումների հակակշռմամբ, թեպետ վերջիններիս մեծությունները շարունակում են նվազանալ միտումը: Սննդամթերքի գնաճի նպաստումը կազմել է -1.8 տոկոսային կետ, մինչդեռ ծառայությունների գնաճը՝ թեպետ տարեսկզբի նկատմամբ շարունակաբար դանդաղում է, շարունակում է մնալ դրական՝ 2.9%-ի չափով, շարունակելով դրական նպաստում ունենալ գնաճին 0.9 տոկոսային կետի չափով: Ծառայությունների գնաճը հիմնականում արտացոլում է որոշ չափով պահպանվող պահանջարկի ճնշումները:

5. Ֆինանսական միջնորդություն: Նոյեմբերին բանկային


համակարգի ֆինանսական միջնորդությունը շարունակել է առաջանցիկ լինել տնտեսական ակտիվության համեմատ, որին նպաստում է 2022թ.-ի կեսերից բանկային համակարգում կուտակված լրացուցիչ իրացվելիությունը: Այսպես, ի տարբերություն նախորդ տարվա և այս տարվա առաջին ինն ամիսների, երբ ավանդների ծավալների աճը զգալիորեն գերազանցում էր վարկերի ծավալների աճին, ներկայումս վարկերի ծավալների աճը գերազանցում է ավանդների ծավալների աճին: Ռեզիդենտների ավանդների աճը կազմում է 19%, իսկ ռեզիդենտների վարկերի աճը՝ 21.8%: Միաժամանակ, վարկերի աճն ըստ ոլորտների առավել ընդգրկում է դարձել (չնայած որ ամենաբարձր նպաստումը շարունակում են ապահովել հիփոթեքային և սպառողական վարկերը)՝ ներառելով նաև տնտեսության ոլորտների (բացառությամբ՝ արդյունաբերության) վարկավորման ավելի բարձր աճի տեմպեր: Ամենաբարձր աճերն արձանագրվել են շինարարության և տրանսպորտի ու կապի ոլորտներում՝ համապատասխանաբար 42% և 39.3%: Իսկ ավանդների և վարկերի դրական տարբերությունը, որը վերջին 2 տարիների ընթացքում էականորեն բարձրացել է և ապահովում է զգալի իրացվելիության բարձր, սկսել է աստիճանաբար փոքրանալ, սակայն շարունակում է գտնվել պատմականորեն բարձր մակարդակում՝ մասամբ պայմանավորված նաև ոչ ռեզիդենտների ավանդների պահպանվող բարձր






ցուցանիշով (2022թ.-ի փետրվարի ցուցանիշից բարձր շուրջ 517 մլրդ դրամով):

Գծապատկեր 5.1. Բանկային համակարգի վարկերի և ավանդների 12 ամսյա աճերը, %



« Ֆինանսական շուկայում առավել ճկուն տոկոսադրույքները (միջբանկային ռեպո, կարճաժամկետ պետական պարտատոմսեր) նվազման միտում ունեն, մինչդեռ առավել կոշտ տոկոսադրույքները (վարկեր, ավանդներ)՝ շարունակում են պահպանվել իրենց միջին մակարդակներում, իսկ որոշ դեպքերում՝ գրանցել նաև աճի միտումներ: Պետական պարտատոմսերի եկամտաբերությունների, հատկապես՝ դրանց միջնաժամկետ և երկարաժամկետ հատվածի համար վճռորոշ գործոն են եղել շուկայական պահանջարկի տատանումները, ինչի արդյունքում, չնայած վերաֆինանսավորման տոկոսադրույքի նվազմանը, միջնաժամկետ և երկարաժամկետ պետական պարտատոմսերի եկամտաբերություններն աճել են: Վարկերի և ավանդների տոկոսադրույքները շարունակել են տատանվել իրենց միջին մակարդակների շրջակայքում. բացառություն են հիփոթեքային և սպառողական վարկերը, որոնց տոկոսադրույքների աճը շարունակվում է դրանց նկատմամբ բարձր պահանջարկի ազդեցությամբ:


Գծապատկեր 5.2. Ֆինանսական շուկայի տոկոսադրույքները, %



### 6. Հարկաբյուջետային հատված: Հարկային եկամուտները

շարունակել են աճել բարձր տեմպերով: 2023թ.-ի նոյեմբերին հարկային եկամուտները կազմել են 161.2 մլրդ դրամ, կամ 2022թ.-ի նոյեմբերի ցուցանիշից ավելի 5.0%-ով: Հունվար-նոյեմբեր ամիսներին հարկային եկամուտները կազմել են 1954.8 մլրդ դրամ՝ լինելով նախորդ տարվա նույն ժամանակահատվածից ավելի 14.1%-ով:


Գծապատկեր 6.1. Հարկային եկամուտների աճի տեմպը, %



Շահութահարկը և ավելացված արժեքի հարկը շարունակել են լինել հարկային եկամուտների աճը պայմանավորող հիմնական աղբյուրները՝ 5.0%-ային կետ և 4.8%-ային կետ մասնակցությամբ: Միաժամանակ, զգալի է նաև եկամտային հարկի դերը, որը հարկային եկամուտների աճին նպաստել է 3.7%-ային կետով: Բացասական նպաստում են ունեցել պետական տուրքերը, ինչը պայմանավորված է մետաղական հանքաքարի համար ժամանակավոր ներմուծված արտահանման տուրքի


չեղարկմամբ, ինչպես նաև բնապահպանական և բնօգտագործման վճարներով:

Գծապատկեր 6.2. Հարկային եկամուտների աճին նպաստումները, %-ային կետ



Պետական բյուջեի եկամուտների աճը առաջանցիկ է եղել ծախսերի նկատմամբ և հանգեցրել պետական բյուջեի դեֆիցիտի: Ընդհանուր առմամբ, հունվար-նոյեմբեր ամիսներին պետական բյուջեն ունեցել է 2069.7 մլրդ դրամի եկամուտներ (նախորդ տարվա հունվար-նոյեմբերի համեմատությամբ ավելի 12.8%-ով), և կատարել 2132.4 մլրդ դրամի ծախսեր՝ նախորդ տարվա հունվար-նոյեմբերի համեմատությամբ ավելի 11.0%-ով: Նշված ծախսերը ընդգրկել են 1799.4 մլրդ դրամի ընթացիկ, և 333.0 մլրդ դրամի ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ, որոնք նախորդ հունվար-նոյեմբերի համեմատությամբ ավելի են համապատասխանաբար 10.7 և 12.7 տոկոսներով:

Գծապատկեր 6.3 Պետական բյուջեի եկամուտները, ծախսերը և պակասուրդը



Պետական բյուջեի պակասուրդն ավելի ցածր է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշից: Նոյեմբերի զարգացումները արտացոլում են պակասուրդային բյուջե՝ եկամուտների մակարդակին 43.7 մլրդ դրամով գերազանցող ծախսերով: Արդյունքում, 2023թ.-ի հունվար-նոյեմբեր ամիսների պակասուրդը կազմել է 62.7 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 86.3 մլրդ դրամ և 2023-ի հունվար-հոկտեմբեր ամիսների 19.0 մլրդ դրամ պակասուրդի ցուցանիշի նկատմամբ: